





ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅՆԱՅՈՒՄԸ

ՊԵՏՐ Է ԴԻՇԴ ԸՆԹԱՅՔԻ ՄԷՉ ԴԵՆԵՔ

Կ'ԸՍԷ ՉԻՆԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԸ

ՊԵՐԼԻՆ, 10 (ՌՈՅԹԸՐԸ).- Չինաստանի նախագահ ձիանկ Ծեյն Չոնգը 2002 թվականի ապրիլի 10-ին Գերմանիայի Բեռլին քաղաքում...

ՊԵՏՐ Է ԴԻՇԴ ԸՆԹԱՅՔԻ ՄԷՉ ԴԵՆԵՔ... ՊԵՏՐ Է ԴԻՇԴ ԸՆԹԱՅՔԻ ՄԷՉ ԴԵՆԵՔ... ՊԵՏՐ Է ԴԻՇԴ ԸՆԹԱՅՔԻ ՄԷՉ ԴԵՆԵՔ...

Չոնգը 1,2 միլիարդ համարյա բնակչություն ունեցող Չինաստանի մոլորակին վրայ բարգաւաճող մեծագույն երկիրն է, ըսած է ձիանկ, սակայն երկիրը պետք ունի ընդհանրական ապահով շրջապատի մը, ուր կարելի պիտի ըլլայ անոր ան արձանագրել, աւելցնուցած է ան:

Չինաստանի անցեալ Դեկտեմբերին անդամակցած էր Առևտուրի Համաշխարհային Կազմակերպության: Անիկա քաղաքային խոսքերուն հետևանքով սպառնալիքը կը դիմագրաւէ, մինչ պետական ընկերություններ ստիպողաբար միջոցառումներ կատարելու համար պարտաւորուելու:

Խոսելով Սեպտեմբեր 11-ի յարձակումներուն մասին, ձիանկ վերահաստատած է իր այն տեսակետը, թէ Չինաստան կը դատապարտէ ամեն տեսակի ահաբեկչություն, սակայն պնդած է, թէ որեւէ հակադարձության պարագային ՄԱԿի օրէնքները պետք է յարգուին եւ ՄԱԿի Ապահովության խորհուրդին դերակատարութիւնը ճանչցուի:

ԹՈՒՐԵՒ

ԿՐԹՈՒԹԵԱՆ ՆԱԽԱՐԱՐԸ ԿՐՆԱՅ ՊԱՇՏՕՆԱԶՐԿՈՒԻԼ

Թուրքիոյ խորհրդարանը երեքշաբթի օր գաղտնիքով քուէարկութեամբ որոշած է քննութիւն բանալ, ինչ որ կրնայ նախարար մը տապալել՝ իսլամական ոճով լաշակ կրողներու դէմ պետութեան շղթայագերած ճնշումներուն մէջ անոր մասնակցութեան համար:

Բանաձեւը ներկայացուցած է որսման կանոններ ընդդիմադիր ԱԲ Կուսակցութիւնը, իր ամբաստանած է կրթութեան նախարար Մեթին Պոսթանչիօղլուն իր պաշտօնը չարաչաճած ըլլալու եւ «կրթական մարզին եւ ուսուցչութեան մէջ շփոթ եւ անհարգանքներով իրեն յառաջանելու անցանքով» կամայական եւ գաղափարախօսական արձրանքով:

Նախարար անդամ է վարչապետ Պիլէնի Էմելիթի Ժողովրդավար Զախ Կուսակցութեան: Անոր նախարարութիւնը առանցքը հանդիսացած է պետութեան ճիշդութեան՝ ճնշելու դպրոցներու մէջ իսլամ կրօնական ուսուցումին եւ հանրային դպրոցներու եւ համալսարաններու մէջ լաշակ կրելը արգիլելու համար:

Մարդկային իրաւանց խմբակներ եւ այլ քննադատներ իսլամ Թուրքիան ամբաստանած են չափազանց խիստ միջոցներ օգտագործելու յանցանքով՝ պետութիւն եւ կրօնք ամբողջովին բաժնելու համար իրարմէ:

Եւրոպական Միութիւնը, որուն կ'ուզէ անդամակցել Թուրքիա, նոյնպէս կրօնքի աւելի լայնածիր ազատութեան կոչ ուղղած է:

Պոսթանչիօղլուն հարցը այժմ պիտի քննարկուի յատուկ յանձնախումբի մը կողմէ, որ ի վերջոյ կրնայ անոր դատաւարութիւնը պահանջել՝ գերագոյն ատենին մէջ:

(ՌՈՅԹԸՐԸ)

ՍԱՏՏԱՄ ԸԻՄԵՅՆԸ ՏԱՊԱԼԵԼՈՒ ՅԱՐՄԱՐ ԺԱՄԱՆԱԿԸ ՉԷ ԸԱՍԱԾ

Կ'ԸՍԷ ՊԵՏՐ

Բրիտանիոյ վարչապետ Թոնի Բլէրը երէկ յայտնեց, որ տակաւին յարմար ժամանակը չէ հասած իրաքի դէմ զինուորական գործողութեան, հաստատելով, որ աշխարհը աւելի ապահով վայրի մը պիտի վերածուի, եթէ նախագահ Սատամ Հիւսէյնի իշխանութիւնը տապալի: Պլէր ըսաւ, որ «Իրաքի դէմ զինուորական գործողութիւնը տապալի չէ հասած, որ իրաքի մէջ հաւաքական քանդումի գէնքերու շինութիւնը՝ Սատամ Հիւսէյնի հովանաւորութեամբ, ոչ միայն խիստ սպառնալիք է շրջանին, այլեւ՝ ամբողջ աշխարհին»:

Բրիտանիոյ մէջ Պլէր դէմ յանդիման կը գտնուի ընդդիմադիրներու, նոյնիսկ իր կուսակցութեան մաս կազմող անդամներու, որոնք դէմ են իրաքի դէմ կատարուելիք որեւէ յարձակումի: Շուրջ 146 երեսփոխաններ, որոնց մեծ մասնութիւնը՝ Պլէրի դեմակարգը Աշխատանքական Կուսակցութեան նէն, իրենց «անհանգստութիւն»ը յայտնած են իրաքի դէմ կատարուելիք որեւէ յարձակումի վերաբերեալ:

Պլէր ընդգծեց, որ Սատամ կրնայ կանխարգիլել նման յարձակումի մը գործադրութիւնը՝ Մ. Նահանգներու եւ Բրիտանիոյ կողմէ, եթէ արտօնութիւն տայ ստուգելու իրաքի գէնքերու պահեստանոցները: «Հաւաքական քանդումի գէնքերու այս հարցը անպայման որ լուծումի կը կարօտի: Մենք պիտի փորձենք այդ հարցը լուծել արմատական ձևով, որովհետեւ չենք կրնար արտօնել նման գէնքերու արտագրութիւնը առանց դաշնակից բանալի պետութիւններու հաւանութեան», նշեց Պլէր:

ԻՐԱՔԻ ԸՆԴՈՒՍԱԳՐՈՒԹԻՒՆ ԴԱՏՏԱՄ

Իսլամ արմատական շիի խմբաւորում մը պատրաստակամութիւն յայտնեց Միացեալ Նահանգներու կողմէն պատերազմելու Սատամ Հիւսէյնի իշխանութեան դէմ:

Վար առնելու նպատակով, տեղեկացուց գերմանական շարժաթերթ մը, Չորեքշաբթի օր:

Շարժաթաթերթին մէջ յիշուած է, թէ իրաքի ընդդիմադիր «Ալ Տաւա» խմբաւորումը, որ միայն հարաւային իրաքի մէջ ինը հազար հետեւորդ ունի, պատրաստ է իրաքի դէմ գործադրուելիք ամերիկեան որեւէ գործողութեան օժանդակելու:

«Տայ 8այթ» շարժաթերթի մէջ թղթակիցը երկու հանդիպումներ ունեցած է «Ալ Տաւա»-ի զինեւորու հետ, որոնք ցոյց տուած են գէնքի երկու պահեստանոցներ Պաղատի մէջ: Ըստ հարցորուած տեղեկութիւններուն, պահեստանոցները կը պարունակեն «Քաթիւլա»ներ, զնդաքիւրներ եւ ականներ:

«Տայ 8այթ»-ի տեղեկութիւններուն համաձայն, իրաք 20էն 80ի բարձրացուցած է թմրական գէնքերու գործարանները, յայտնած են գերմանական գաղտնի պաշտարկութեան պաշտօնատարներ:

(ՌՈՅԹԸՐԸ)

ՌՈՒՄԻԱ - ԳԵՐՄԱՆԻԱ ԱՐՏԱՍՈՎՈՐ ՏԱԳՆԱՊ ՄԸ ԼՈՒԾՈՒԵՑԱԻ

ՎԵՅՄԱՐ, 10 (ՌՈՅԹԸՐԸ).- Ռուսիա Չորեքշաբթի օր ընդունած է Գերմանիոյ 500 միլիոն եւրո վճարել՝ հատուցելու համար նախկին խորհրդային Միութեան նախկին Արեւելեան Գերմանիոյ տրուելիք աղետուրի մարզի պարտքերը, լուծելով բանալի մը, որ տարիներէ ի վեր գոյութիւն ունի: Ռուսիոյ նախագահ Վլադիմիր Փութին, որ երկօրեայ այցելութեան մը համար Գերմանիա կը գտնուէր, եւ Գերմանիոյ վարչապետ Կերխարտ Շրեյտերը բանակցութիւններէ ետք յայտարարած են՝ նշեալ համաձայնութիւնը:

Փութին միացեալ մամուլի ասուիսի մը ընթացքին յայտնած է, թէ հարցը արտասովոր է, սկստի ունենալով, որ պարտքերուն առնչութեամբ ինդրոյ առարկայ կառուցարարութիւնները տապալած են: Այսուհանդերձ, ան ընդունած է Գերմանիոյ այս տարի 350 միլիոն եւրո (308 միլիոն տոլար)

հատուցել, իսկ մնացեալը յառաջիկայ 2 տարիներուն: Յարը երկու կողմէն չէին կրցած համաձայնիլ փոխանակման սակի մը շուրջ, որպէսզի կարելի ըլլայ հարցը լուծել: Շրեյտերը, դիտել տալով, որ ներկայիս երկկողմանի յարաբերութիւնները շատ լաւ են, յայտնած է, թէ համաձայնութիւնը տեղի կ'ունենան, ինչպէս նաեւ եղափոխուող նախագահ Միութեան եւ միջազգային այլ կառույցներու մէջ:

Շրեյտերը լուծել պակցորին արտայայտած է Փութինի, դիտել տալով, թէ համոզուած է, որ երկար տեղութեամբ խաղաղութիւն է բարգաւաճում պիտի չարձանագրուի անանց Ռուսիոյ:

Գերմանիոյ վարչապետը, որ Փութինը հիւրընկալած է նախկին Արեւելեան Գերմանիոյ մէջ, ուր ան աշխատած է անցեալի իրրէ Քա. Կէ. Պէ. ի գործակալ, որչափ նաեւ վերջին տարիներու տնտեսական յարաբերութեանց բարելաւումը:

ՓՈՒԹԻՆ ԵՐՈՊԱՆ ԿԸ ԶՈՒՇԱՅՆԷ

Միւս կողմէ, Փութին, յիշեցնելով եւրոպացիներուն, թէ իրենց վառելանիւթի համար Ռուսիային կախեալ են, երեքշաբթի օր Արեւմուտքը վստահութեամբ ըստ Ռուսիա

կրնայ խոչընդոտներ ստեղծել, եթէ ապագայ համաձայնութիւններու մէջ Մոսկուա իրեն հաւասար գործակից նկատի չառնուի:

Ան շեշտած է, որ Մոսկուա իրեն հաւասար գործակից կ'ուզէ նկատուի ՕԹԱՆԻ նոր խորհուրդին մէջ (որուն շուրջ տակաւին բանակցութիւններ տեղի կ'ունենան), ինչպէս նաեւ եղափոխուող եւրոպական Միութեան եւ միջազգային այլ կառույցներու մէջ:

Շրեյտերը լուծել պակցորին արտայայտած է Փութինի, դիտել տալով, թէ համոզուած է, որ երկար տեղութեամբ խաղաղութիւն է բարգաւաճում պիտի չարձանագրուի անանց Ռուսիոյ:

Գերմանիոյ վարչապետը, որ Փութինը հիւրընկալած է նախկին Արեւելեան Գերմանիոյ մէջ, ուր ան աշխատած է անցեալի իրրէ Քա. Կէ. Պէ. ի գործակալ, որչափ նաեւ վերջին տարիներու տնտեսական յարաբերութեանց բարելաւումը:

ԻՐԱՔԻ ՅԱՄԱՐԿԱՆ ԲԱՆԴՈՒՄԻ ԶԵՆՔԵՐՈՒ ԾՐԱԳԻՐԸ՝ ԲՆՆԱՐԿՈՒՄԻ ԱՌԱՐԿԱՅ

Միացեալ Նահանգներու նախագահ ձորձ Պուշ եւ ՕԹԱՆԻ ընդհանուր քարտուղար ձորձ Ռոպերթսըն հանդիպումի մը ընթացքին քննարկած են իրաքի եւ անոր շինած հաւաքական քանդումի պէնքերուն սպառնալիքի հարցը, յայտնեցին ամերիկացի պաշտօնատարներ: Հանդիպումին ներկայ գտնուած են փոխ նախագահ Տիք Չէյնի եւ պաշտպանութեան նախարար Տոնրլոյ Ռամսֆելտ:

Մէկ ժամ տեւած հանդիպումէն ետք նախագահ Պուշ ըսած է. «Այս պահը շատ կարեւոր է ՕԹԱՆԻ համար: ՕԹԱՆ պէտք է յառաջանէ նոր եւ ճկուն կարողութիւններ 21րդ դարուն սպառնացող վտանգներուն դէմ դիմելու համար: Հարկ է որ ունենանք նոր անդամներ, որպէսզի կարենանք պատուութիւն պահովել Պալեստին շրջանէն մինչեւ Սեւ Ծով»:

Պուշ նկատել տուաւ նաեւ, որ ՕԹԱՆ պէտք է Ռուսիոյ հետ աւելի շինի յարաբերութիւններ մշակել, որպէսզի վերջնականապէս կարելի ըլլայ նախկին շրջանի յարուածութիւնը շրջանցել: Իր խօսքին մէջ ան ուղղակի ակնարկութիւն չըրաւ իրաքի հասցեին, սակայն նշեց, որ Մ. Նահանգներ իր դաշնակիցներուն հետ կարծիքներ պիտի փոխանակեն ահաբեկչութեան դէմ իրենց մղած պատերազմին շարունակութեան ընթացքին:

Ռոպերթսըն, իր կարգին, յայտնեց, որ հանդիպումին քննարկուած են Եւրոպայի եւ Հիւսիսային Ամերիկայի սպառնացող վտանգները, ինչպէս նաեւ հաւաքական քանդումի պէնքերուն վտանգը լուծելու հեռանկարները:

Ռոպերթսըն յայտնեց, որ ՕԹԱՆ դաշնակիցները լրջօրէն պիտի քննարկեն այս սպառնալիքները եւ հաստատեց, որ անպայման պիտի յաջողին իրենց առաքելութեան մէջ:

(ՌՈՅԹԸՐԸ)

ԹՐԲԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՄԸ ՕԺԱՆԴԱԿՈՒԹԵԱՄԲ

ԱՖՂԱՆԻՍՏԱՆԻ ՄԷՉ ԲԶԻԶԱՅԻՆ ՀԵՌԱԶԱՅՆԻ ՑԱՆՑԻ ՀԱՍՏԱՏՈՒՄ

ՊՈԼԻՍ, 10 (ՌՈՅԹԸՐԸ).- Թրքական անթել հաղորդակցութեանց սարքերու «Ալթաթէլ Թեյթա» ընկերութիւնը Չորեքշաբթի օր յայտնած է, թէ Աֆղանիստանի «Թեյթա» ընկերութեան հետ բանակցութիւններու մէջ է՝ քանդում երկրին մէջ բջիջային հեռաձայններու ցանցի մը հաստատումին համար:

Թուրքիա ընդունած է սկստնելով Բրիտանիային ստանձնել Քապուլի մէջ 18 երկիրներէ պիտուրներէ բաղկացած խաղաղաբար ուժին հրամանատարութիւնը: Կ'ակնկալուի, որ անիկա յոպիհնիկի դիմէ, որպէսզի թրքական ընկերութիւններու յանձնուի Աֆղանիստանի մէջ վերակառուցման ծրագիրներ:

Աֆղանիստանի փոխանցման հանգրուանի ղեկավար Համիտ Քարպայ անցեալ շաբաթ Թուրքիա իր այցելութեան ընթացքին յոյս յայտնած է, որ միջազգային խաղաղաբար ուժերու թրքական հրամանատարութիւնը որոշ ժամանակ մը պիտի տեսէ, եթէ այդ ուժը կարելի պիտի ըլլայ այլ քաղաքներ տարածել:

Շուէտական «Էրիքսոն» ընկերութիւնը վերջերս օգնած է, որպէսզի Քապուլ իր բջիջային հեռաձայններու առաջին դրութիւնը ունենայ, կարգ մը սարքեր հայթայթելով Աֆղանիստանի:

Վ.Բ.Ս.Վ.Ե.Ը. «ԱԼԵՔ ՍԱՆՈՒԿԵԱՆ» ԿԵՂՈՆ ՍԵՂԱԿՈՒԹԱՅԻՆ ՅԱՆՁՆԱՆՈՒՄԲ 15 ԱՊՐԻԼ 1906 ԸՆԿՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՆՈՒԹԻՒՆ ԴԱՍԱԽՕՍԱԿԱՆ ԵՐԵԿՈՅ Եւրոպական Սերոս Արձեւան Գործընկերութիւն Բանախօս Սերոս Արձեւան Տեղի կ'ունենայ Չորեքշաբթի, 17 Ապրիլ 2002, երեկոյեան ժամը 7:30ին, «Ալեք Սանուկեան» կեդրոնի մէջ, Ուսթուաթ: ԳԵՂԱՐՈՒԵՍԱԿԱՆ ՅԱՅՏԱԳԻՐ ԵՐԵՎԱՆ

We Give Services... Not Just Policies... AFHIL... OUR HEALTH AND YOURS DON'T SMOKE... FOR THE SAKE OF OUR NERVES AND YOURS KEEP SILENT... WATCH OUT! BABY ON BOARD... DRIVE SAFELY... AFHIL

Haigazian University Faculty of Business Administration & Economics Building Excellence in Business Education Started accepting applications for the Fall semester 2002-2003 for the following degrees: Masters in Business Administration, Bachelor Degree in: Business Administration, Economics, Business Administration Emphasis on: Hospitality Management, Management Information Systems, Accounting, Legal Studies, Advertising and Communication, Finance.


ԳՈՐԾԱԾԵՑԷՔ FUEL CARDԸ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԾՐԱԳԻՐՆԵՐՈՒ ՅԱԶՉՈՂՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ Յաւելեալ մանրամասնութեանց համար հեռաձայնել՝ 01-242556 թիվին:

ԱՅՍՕՐ «ԱՐԵԳ» ԿԸ ՍԿՍԻ «ՀԱՆՃԱՐԻ ԱՆՃԱՐԱԿՆԵՐԸ» ԹԱՏԵՐԱԽԱՂԻՆ ԵԼՈՅԹՆԵՐՈՒՆ

# ՀԱՐՑԱԶՐՈՅՑ՝ ԲԵՄԱԴՐԻՉ ՎԻԳԷՆ ՍՏԵՓԱՆԵԱՆԻ ՀԵՏ

Այսօր, Հինգշաբթի, 11 Ապրիլի երեկոյան ժամը 8:00ին, «Յակոբ Տեր Մելքոնեան» քառերասրահին մէջ կը սկսի ելոյթը Համազգայինի «Արեգ» մանկապատանեկան քառերասրահին «Հանձարի անձարակները» քառերասրահին: Այս առիթով քառերասրահի եւ բեմադրիչ Վիգէն Ստեփանեանի հետ «Ազգակ» ունեցաւ հետեւեալ հարցազրոյցը, թէ՛ «Արեգ»-ի եւ թէ՛ անոր վերջին գործին մասին:

«Ա.Չ.Ա.Կ».- Թե՛ եւ Գառնիկայի անդրադարձած ենք «Արեգ» մանկապատանեկան քառերասրահին կազմութեան եւ գործունէութեան, սակայն լաւ կ'ըլլայ այս առիթով անգամ մը եւս մեր ընթերցողներուն յիշեցնենք «Արեգ»-ի կենսագրականը:



Վիգէն Ստեփանեան կը հետեւի «Արեգ»-ի փորձերուն:

Վ. ՍՏԵՓԱՆԵԱՆ.- 1999-ի Մայիսի սկսած Համազգայինի Հիւանդանի Երջանային վարչութեան «Արեգ» մանկապատանեկան քառերասրահին անդամներուն արձանագրութիւնը: 1999 - 2000-ի տարեշրջանի սկիզբը սկսած կանոնաւոր փորձերը: 2000-ի Մարտի 3-ի «Կաթիլ մը մեղր»-ով քառերասրահը ունեցաւ իր անդամակալ ելոյթը: 2000-ի ամռան «Արեգ»-ը «Կաթիլ մը մեղր»-ը ներկայացուց նաեւ Երեւանի եւ Արցախի մէջ: 2000-ի ձմեռը «Գառնիկ» պարախումբի եւ «Կարկաչ»-ի հետ միասին «Արեգ»-ը բեմ հանեց «Հեքիաթներու աշխարհ» ամանորեայ հանդէսը: 2001-ի գարնան խաղացիք «Տէր ու ծառան» երաժշտական թատերախումբի հիւրախաղով «Արեգ»-ը մեկնեցաւ Սուրիա, Քէսապ: 2001-2002-ի ձմեռը ընթացքին

բողջ աշխարհին ուրախ Նոր Տարի» երգախումբի եւ պարախումբի ներկայացումը, որուն մէջ նախորդէն աւելի մեծ էր «Արեգ»-ի լուսամասը: Իսկ այսօր կը սկսինք ներկայացնելու մեր վերջին ամիսներու աշխատանքներն պտուղը Յովհաննէս թուամանեանի հեքիաթներուն հիմամբ «Հանձարի անձարակները» թատերախաղը:

«Ա.Չ.Ա.Կ».- Լիբանանահայ գաղութին եւ ընդհանրապէս Սփիւռքի համար անցաւ ընթացքին «Տէր ու ծառան» երաժշտական թատերախումբի հիւրախաղով «Արեգ»-ը մեկնեցաւ Սուրիա, Քէսապ: 2001-2002-ի ձմեռը ընթացքին


Վ. ՍՏԵՓԱՆԵԱՆ.- Նախ ըսեմ, որ իմ տրեւայնեակով, գոնէ Սփիւռքի պարագային, «Արեգ»-ը միակ թատերախումբն է, որուն դերասանական կազմը ամբողջութեամբ բաղկացած է մանուկներէ եւ պատանիներէ: Իմ կարծիքով այս յաջողակ մեկնարկը ունեցանք նուիրումի շնորհիւ: Անշուշտ ամէն ինչ միշտ ալ հեզասահ չ'ընթանար, ի հարկէ դժուարութիւններու կը բախինք, բայց թէ՛ իրրեւ դերասանական կազմ եւ թէ՛ իրրեւ վարչութիւնը կը սիրենք թատերը: Ընդհանրապէս արուեստի մէջ սէրը շատ կարեւոր է: Երբ ամբողջ օրը գասերով ծանրաբեռնուած աշակերտը (մենք նոյնիսկ ունինք պրէզովէի աշակերտներ) կէսօրէ ետք ներկայ է փորձերուն եւ ամբողջ հոգիով կ'աշխատի, անպայման որ յաջողութիւն կ'արձանագործուի:

«Ա.Չ.Ա.Կ».- Տարուան ընթացքին քառերակց զարգացման քառերակց փորձեր կը կատարենք «Արեգ»-ի անդամները:

Վ. ՍՏԵՓԱՆԵԱՆ.- Այո՛, անպայման: Դժբախտաբար չենք կրնար այդ աշխատանքները աւելի ընդարձակել, որովհետեւ աշակերտներուն դպրոցական ծրագրերը ծանրաբեռնուած է, ելոյթներուն փորձերը կան եւ, իրրեւ թատերի ուսուցիչ, եւ առանձին եմ: «Արեգ»-ի անդամները կը սորվին թատերական երեք հիմնական նիւթեր՝ դերասանի վարպետութիւն, դերասանի խօսք եւ բեմական շարժում: Ունինք մօտ յիսուն աշակերտ, որոնց 24-ը արդէն բեմի վրայ են:

«Ա.Չ.Ա.Կ».- Թատերակց այս ուսուցումները ի՞նչ կը սորվեցնեն մանուկ եւ պատանի դերասաններուն:

Վ. ՍՏԵՓԱՆԵԱՆ.- Բեմական խօսքը կը սորվեցնէ ձիւղ շնչառութիւն, բառերու ճշգրիտ արտասանութիւն, խօսելու ընթացքին շրթունքներու, լեզուի, ակունքներու ճիշդ շարժումներ: Անօրեայ կեանքին մէջ մարդիկ յաճախ ուշադրութիւն չեն դարձնել իրենց խօսածքին եւ բառերու



Պատանի դերասանները «Հանձարի անձարակները» քառերասրահին փորձերուն ընթացքին:

դարձեալ «Գառնիկ»-ի ու «Կարկաչ»-ի մասնակցութեամբ խաղացինք «Ա.Չ.Ա.Կ»-ի մասնակցութեամբ:

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ «ԱՐԵԳ» ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ԹԱՏԵՐԱԽԱՂԻՆ ԿԸ ՆԵՐԿԱՅԱՆԵ՛ «ՀԱՆՃԱՐԻ ԱՆՃԱՐԱԿՆԵՐԸ» Ետեւողութեամբ՝ Յ. ԹՈՒՄԱՆԵԱՆԻ Թատերագիր եւ բեմադրիչ՝ Վ. ՍՏԵՓԱՆԵԱՆ Տեղի կ'ունենայ Հինգշաբթի, 11 Ապրիլ երեկոյան ժամը 8:00ին, Ծաբաթ, 13 Ապրիլ կէսօրէ ետք ժամը 4:30ին, եւ Կիրակի, 14 Ապրիլ կէսօրէ ետք ժամը 5:00ին, «Յակոբ Տեր Մելքոնեան» քառերասրահին մէջ: Սակ՝ 5000 լ.ո.

## ԱՐՑԱԽԵԱՆ ՕՐԱԳՐՈՒԹԻՒՆ

# ԹՌԻԻԶՔ ԱԿԱՆՆԵՐՈՒ ՎՐԱՅՈՎ...

4 Յունուար 2002: Քարվաճառի Մառ գիւղ: Առաւօտեան կանուխ ժամերուն կը հանդիպինք գիւղապետ Սամուէլին: Սեւանայ լիճի մերձակայ Մարտունի քաղաքի բնակիչ Սամուէլ եւ այլ մարտունեցիներ տարիներով անգործ մնալէ ետք կը մեկնին Ռուսիա՝ իրենց ընտանիքներուն ապրուստը հոգալու: Երեք տարուան պանդխտութենէ ետք Սամուէլ կը վերադառնայ Հայաստան: 1999ին կողակիցին՝ Գիւլնարայի, գաւակներուն՝ Սասունի (13 տարեկան), Սահակի (11) եւ Սիմոնի (9) հետ կը հաստատուի Մառ: Իրեն կը հետեւին Մարտունի քաղաքի այլ ընտանիքներ, ինչպէս նաեւ՝ Շահումեանէն եւ Պաքուէն գաղթած հայ ընտանիքներ: Ներկայիս գիւղին մէջ կ'ապրին 18 ընտանիքներ, իրենց ընտանի անասուններով:



Հարուսի մէջ կեանքը կը շարունակուի

2001ին վեց նորածիններով բախտաւորուած է գիւղը, առանց հիւանդանոցի սովորական ծննդաբերական ծառայութեան, որովհետեւ հիւանդանոց գոյութիւն չունի շրջանին մէջ: Կ'այցելենք նորածիններով բախտաւորուած ընտանիքներուն տունները: Եթէ գիւղը ելեկտրականութեամբ օժտուի, իսկական ֆրախտավայրի մը կ'ընայ վերածուիլ, նկատու ունենալով, որ գիւղի մերձակայքը ջրառատ է եւ ծածկուած է անասուններու համար կանաչապատ արօտավայրերով:



Քարվաճառի մէջ միայն երկու եկեղեցի կանգուն կը մնայ: Բնակարաններու պատերուն մէջ կարելի է նկատել գեղեցիկ քանդակներու բեկորներ: Երջանի նախկին թրքախօս քիւրտերը, հայկական մշակութային կոթողները քանդուով, քարերը օգտագործած են ընակարան շինելու:

Քարվաճառի մէջ միայն երկու եկեղեցի կանգուն կը մնայ: Բնակարաններու պատերուն մէջ կարելի է նկատել գեղեցիկ քանդակներու բեկորներ: Երջանի նախկին թրքախօս քիւրտերը, հայկական մշակութային կոթողները քանդուով, քարերը օգտագործած են ընակարան շինելու: Կը հանդիպինք Լուսաբերին, ծնեալ Շահումեան, 1924: Շահումեանի բռնագրաւման ընթացքին երկու շաբթուան լեռներու ու անտառներու ընդմէջէն հետիոտն գաղթականի ողիսականէ մը ետք, ան կը հասնի Հայաստան: 1915ի Եղեռնի պատմութիւնը կը կրկնուէր Լուսաբերին եւ միւս շահումեանեցիներուն համար: Հիմա կանթեղի մը լոյսին տակ թերթ կը կարդայ: Վերջին յիշատակը ծննդավայրէն՝ հայրենի տան սեւ ու սպիտակ լուսանկարն է: Լուսաբերը հանդարտ է, գայրոյթի եւ բարկութեան նշոյլներ չկան դէմքին, երբ կը պատմէ իր ողիսականներ: Պէտք է դիմանալ եւ նոր կեանքը վերսկսիլ նոր յոյսով, կը յայտնէ ան: Կը լուսանկարեմ գինք:


Մայրամուտը կը մօտենայ: Դէպի Ստեփանակերտ վերադարձին կը շարունակեմ լուսանկարել հովիտները, շինարարները, արցախցիները...

5 Յունուար, 2002: Դէպի Հազրուէ: Կը հասնինք Տող գիւղ: Երջանի պաշտպաններէն շատեր, որոնց ժամանակին լուսանկարած եմ, այժմ կը հանգչին հողին տակ: Սակայն իրենց թափած արեան շնորհիւ կեանքը կը շարունակուի հոս: Կը հասնինք Թղկոտ գիւղ: Կը հանդիպիմ 78ամեայ Ապրես Արգումանեանին: «Մասնակցած եմ Բ. Աշխարհամարտին, կիսն 16 տարի առաջ մահացաւ»: Կարճ ակնթարթով խօսելով, որուն ընթացքին քանի մը նախադատութիւններու փոխանակումով կը հասկնամ այս հայրենակիցին ամբողջ կեանքը: Բ. Աշխարհամարտին 30 հազար արցախցիներ իրենց կեանքը գոհեցին յանուն մարդկութեան:



Գանձասարի հովիտը 30վահմեայ ընտանիքին հետ: Բ. Աշխարհամարտին 30 հազար արցախցիներ իրենց կեանքը գոհեցին յանուն մարդկութեան:

Քիչ ետք կը մօտենանք Շօշկավանքին, որ քանի մը տարի առաջ լուսանկարած էի ուղղաթիռէն: 11րդ դարու այս վանքի վերանորոգման աշխատանքներուն ձեռնարկած էր նախկին պաշտպանութեան նախարար զօր. Սամուէլ Բաբայան: Վանքին շուրջ գիւղացիներ կրակարանի փայտ կը պատրաստեն:



Շահումեանցի Լուսաբեր

6 Յունուար 2002: Հիւսիս - հարաւ կառուցուող մայրուղիով կ'ուղղուինք դէպի հիւսիս, վանք գիւղ եւ Գանձասար: Շահումեանի անկումէն ետք ազգերու յառաջանողացքը ստացած է ուսման իր բաժինը: Քանի մը հրթիռներ հարուածած են ուղղակի եկեղեցին, սակայն չեն պայթած: Տեղացիներ երկնային հրաշքի համազօր կը նկատեն այս մէկը: Եկեղեցւոյ մէջ Տէր Յովհաննէսի դեկավարութեամբ դպրաց դասը երգեցողութեան մէջ է: Տէր Յովհաննէսին, երէցկիւն Վերային, իրենց գաւակներուն՝ Ջայլին (14 տարեկան), Արցախին (13), Յարութիին (11) եւ Հայկի (5) հետ կը լուսանկարեմ: Ազգերներու դէմ գիւղի պաշտպանութեան մարտերուն տէր Յովհաննէս գէն ի ձեռին պաշտպանած է Աստուծոյ տունը եւ հայրենի գիւղը: Գիւղին մօտ կը գտնուի ուսուցչական մեծահարուստի մը կողմէ կառուցուած փայտամշակուածի գործարանը, որ գործ կը հայթայթէ գիւղի բնակչութեան:

7 Յունուար 2002: Ստեփանակերտի մէջ կ'այցելեմ հիւանդանոց եւ կը լուսանկարեմ նորածիններն ու մայրերը: Յարող հանդիպումս Լեւոնային Ղարաբաղի Հանրապետութեան նախագահ Արկարի Ղուկասեանին հետ է: Ապա՝ Ստեփանակերտի փողոցները, ուր չորսուող լուսաբեր շարքերը շարք կը կազմեն: Տարիներ առաջ լուսաբեր այս խճողումը չկար, մարդիկ ապաստարաններու մէջ էին:

Մոնթրէալ վերադարձիս, կը գրեմ սոյն օրագրութիւնը: Կը փորձեմ գտնել խորագիր մը: Կը յիշեմ ականապատ դաշտի եզրին կանգնած միջոցիս, դաշտին մէջտեղ մենաւոր ծառին կատարին բազմած բազան, որ գննելէ ետք շրջապատը թեւատարած թռչեք առաւ ականապատուած դաշտին վրայով: Արցախցի թռչեքը դժուարութիւններու եւ խոչընդոտներու վրայով թռչեք դէպի կեանք... թռչեք՝ ականներու վրայով...

## ԶԱՐԵՆՑԻ ԱՆՈՒԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԻ ՄՆԱՅՈՒՆ ՅՈՒՑԱԴՐՈՒԹԵԱՆ ՎԵՐԱԲԱՅՈՒՄ

Տասնամեայ ընդմիջումէ մը ետք, 4 Ապրիլին բացուած կատարուեցաւ Երեւանի Եղիշէ Չարենցի անուան գրականութեան եւ արուեստի թանգարանի մնայուն ցուցահանդէսին՝ «Սայաթ Նովայէն մինչեւ Չարենց» նոր վերտառութեամբ: Ան կ'ընդգրկէ հայ մշակոյթի շուրջ 200 տարուան պատմութիւնը՝ քանի մը հազար ցուցանմուշներով: Թանգարանի տնօրէն Չ. Բախչինեան նշեց, որ այս ցուցահանդէսը հայ նոր սերունդին համար արժէքաւոր գիտական աղբիւր է, մանաւանդ անոնց համար, որոնք կ'ուսումնասիրեն մեր մշակոյթն ու անոր պատմութիւնը: Յուլիանոսի վերաբացման գործին մէջ թանգարանին օգնութեան ձեռք մեկնած են սփիւռքահայ անհատներ եւ միութիւններ, որոնց շարքին՝ 90ամեայ Երաժիշտ Սիրվարդ Գարամանուկ, Կ. Պոլիսէն, իւրեւորաբարակ դաշնակահար Շահան Արծրունի, Հայկազեան Հայագիտական Հանդէսը, Հայ Օգնութեան Ֆոնդը եւ Փարիզի «Սիւմանթո» միութիւնը:

# ԼՕՆԻ «ԱՐԱՔՍԻ ՊՈՒԼՂՈՒՐԾԵԱՆ» ԸՆԿԵՐԱՔԺՇԿԱԿԱՆ ԿԵԴՐՈՆԸ՝ ՀԱՐԱՉԱՏ ԲՆԱԿԱՐԱՆ ՄԸ



«Ես եմ ընտանիքի անդամները, որոնք հիւանդութեան կամ անհամապատասխան պարագային, անվարան կու գանք ԼՕՆԻ «Արաքսի Պուլղուրծեան» կեդրոն, ուր միշտ գտած ենք եւ կը գտնենք ընտանեկան ջերմ մթնոլորտ եւ իւրաքանչիւր անհատի նկատմամբ յատուկ հոգատարութիւն», ըսաւ հիւանդներէն մէկը:

Հայ ժողովուրդը իր պատմութեան ողջ ընթացքին ենթարկուած է գանազան դժբախտութիւններու, հայածուած ու հարուածուած է ուրիշներէն, սակայն հակառակ բոլոր դժուարութիւններուն եւ զրկանքներուն, շարունակած է գոյատեւել եւ կերտել, կերտել՝ աւելի պայծառ ապագայի մը յոյսով, կերտել՝ որպէսզի յառաջիկայ սերունդները աւելի լաւ պայմաններու մէջ ապրին, կերտել՝ որովհետեւ այդ մէկը հայու բնազդ է:

Հայկական Յեղասպանութեան ճողոպրած բնակիչները իրենց հասած տեղերը շինած են տուններ, դպրոցներ, եկեղեցիներ, կեդրոններ եւ ստեղծած՝ միութիւններ, որոնցմէ իւրաքանչիւրը ստեղծուած է յատուկ հեռանկարի ու նպատակի հիման վրայ:

1930 թուականին Լիբանանի մէջ կը հիմնուի Լիբանանի Օգնութեան Խաչը, որ կը ձգտի իր աշխատանքով հասնել հայ ժողովուրդի կարիքներուն եւ իր կարելիութիւնները տրամադրել ի սպաս հայութեան ծառայութեան: ԼՕՆը ժամանակի ընթացքին կ'ընդարձակէ իր գործունէութիւնը եւ կը սատարէ հայ ժողովուրդին Ֆիզիքական եւ բարոյական կարիքներուն իր կրթական, ընկերային, առողջապահական, դաստիարակչական, քարոզչական եւ կազմակերպական աշխատանքներով:



ԼՕՆի առողջապահական, բժշկական եւ ընկերային մարզը աւելի եւս զարգացնելու եւ մասնագիտականացնելու նպատակով 1987 թուականին կը հիմնուի ԼՕՆԻ «Արաքսի Պուլղուրծեան» ընկերարժեքային կեդրոնը՝ Մելքոն, Յարութիւն եւ Սարգիս Պուլղուրծեան եղբայրներուն րարերարութեամբ:

Պուրծ Համուտի կեդրոնը գտնուող այս կառույցը կը միտի անսակարկ եւ մասնագիտական օժանդակութիւն տրամադրել անխորտիր բոլոր այն անհատներուն, որոնք կարիք ունին Ֆիզիքական, հոգեկան եւ ընկերային որեւէ ծառայութեան:

Կեդրոնին դրան սեմէն մուտք գործող անմիջապէս կը դիմաւորեն կեդրոնի պաշտօնատեղերուն մեղմ ժպիտները, որոնք ինքնաբերաբար հանգստութիւն եւ ուժ կը ներշնչեն հիւանդին: Կեդրոնին մէջ եռուզեռ անպակաս է, կեդրոն կը մտնեն եւ անկէ դուրս՝ կու գան օրական շուրջ 200 հոգի, որոնք կ'այցելեն կեդրոնին գանազան բաժանմունքները: Կեանքով ու կենսունակութեամբ կ'եռայ այս կեդրոնը, որուն զլիաւոր նպատակն է մարդոց կեանքին ու առողջութեան հսկել եւ անոնց բոլոր հարցերուն յարմար լուծումներ գտնել: Կեդրոնին մէջ աշխատող իւրաքանչիւր անհատ կը փորձէ իր առաւելագոյնը տալ, որպէսզի օգնէ այցելուին եւ գայն հանգիստ եւ գոհ պահէ: Կեդրոնին մէջ կը գտնուին բոլոր անհրաժեշտ պայմաններն ու սարքերը լաւագոյն, որակաւոր եւ մասնագիտական բժշկական, առողջապահական եւ ընկերային ծառայութիւններ մատուցելու համար:

«Արաքսի Պուլղուրծեան» ընկերարժեքային կեդրոնին մէջ յատկանշական է այն երեւոյթը, որ կեդրոն կ'այցելէ ամէն մարդ, առանց ազգի, սեռի, տարիքի եւ դասակարգի խտրութեան եւ բոլորն ալ կը ստանան նոյն սպասարկութիւնը անխտիր:

### ՏԵԼԵԿԱՏՈՒՎԱԿԱՆ ԲԱԺԻՆ, ՇՏԱՊ ՕԳՆՈՒԹԻՒՆ ԵՒ ԴԵՎԱՐԱՆ

Գետնայարկի վրայ կայ տեղեկատուական եւ հիւանդատար կառքերու բաժանմունքը, ուր կը գրմէ ներս մտնողը եւ անհրաժեշտ տեղեկութիւններն ու ուղղութիւնները կը ստանայ: Այդ բաժանմունքին կը կապուին նաեւ այն անձերը, որոնք կ'ուզեն հիւանդ մը փոխադրել հիւանդանոց, բժշկի կամ այլ տեղ: Կեդրոնը ունի երկու հիւանդատար ինքնաշարժներ, որոնք անվճար կերպով կը տրամադրուին հիւանդներու փոխադրութեան:



Հիւանդատար ինքնաշարժ

Այդ յարկին վրայ կը գտնուի նաեւ ԼՕՆԻ դեղարանը, ուր դեղերը կը ծախուին դուրսի դեղարաններէն աւելի փոքր գինով: Դեղարանին մէջ կ'աշխատին դեղագործ մը եւ երկու օգնակականներ, որոնք երբեմն հանդիպումներ կ'ունենան կեդրոնի բժիշկներուն հետ, որպէսզի ճշգրտի նոր դեղերու պարագան: Դեղա-

րանք առօրեայ դրութեամբ ապսպրանքներ կը կատարէ եւ դեղեր կը տրամադրէ ԼՕՆԻ բժիշկներուն կողմէ դեղագիրներ ունեցողներուն, այլ բժիշկի մը դեղագիրով ներկայացողներուն կամ առհասարակ այն անձերուն, որոնք հետեւողական կերպով ստուգելու դեղը կը գործածեն: Դեղարանին պաշտօնները ընդհանրապէս կը խուսափին առանց դեղագիրի դեղեր տալէ:

Գետնայարկի վրայ հաստատուած է շտապ օգնութեան բաժանմունքը, ուր մնայուն կերպով ներկայ է բժիշկ մը, որ պատրաստ է օգնութեան փութեամբ: Հոս կը ներկայանան արկածներու պատճառով որեւէ հարց ունեցող անհատներ, որոնք կը ստանան անհրաժեշտ խնամքն ու բուժումը, իսկ եթէ պարագան դժուար է եւ կարելի չէ կեդրոնին մէջ բուժել, հիւանդը կ'ուղարկուի հիւանդանոց: Հոս կայ նաեւ վկայաւ իր հիւանդապահու-



Յողանկարում

հի մը, որ կ'օժանդակէ մասնագէտ բժիշկին: Շտապ օգնութեան բաժանմունքին մէջ կը կատարուին փոքր վիրաբուժական գործողութիւններ: Այդ բաժնին քով կը գտնուի շոգանկարումի եւ ecographyի բաժանմունքը, ուր մասնագէտ բժիշկներու եւ թերապիստներու գործակցութեամբ աշխատանքներ կ'ընթանան:



### Աշխատող աշակերտներու համակարգիչի դասընթացը ԸՆԿԵՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹԵԱՆ ԳՐԱՄԵՆԵԱԿ ԵՒ ՆԱԽԱԶՉՈՒՇԱԿԱՆ ԲԱԺՄԱՍՈՒՆՔ

Առաջին յարկին վրայ կը գտնուին տնօրէնութիւնը, ընկերային գրասենեակը եւ շտապ օգնութեան բաժանմունքը:

Հակառակ անոր որ կեդրոնին սպասարկութիւնը տրամադրելի է անխտիր բոլոր անհատներուն, ընկերային ծառայութեան բաժանմունքը իր ծառայութիւնները դրած է ի սպաս հայ անհատներուն, որոնք թիւր կը հասնի ամսական շուրջ 400 հոգի: Ընկերային ծառայութեան գրասենեակ կ'այցելեն բոլոր այն հայերը, որոնք չեն կրնար կեդրոնին մէջ վճարումներ կատարել, անոնք ընդհանրապէս կարիք կ'ունենան դեղորայքի, ընկերային նիւթական յատկացումներու եւ տարրալուծարանային քննութիւններու: Գրասենեակը նաեւ նուազ սակերով կամ ձրիօրէն սպասարկութիւն կը տրամադրէ տարեց, անտէր եւ անկարող պարագաներու: Անիկա կը կատարէ հիւանդանոցային դաստորութիւններ, Լիբանանի կարմիր խաչէն արեան ապահովում, կու տայ անհրաժեշտ ցուցումներն ու ուղղութիւնները, պարագաներուն կը տրամադրէ անթացուպ, walker, wheel chair եւ այլն, եւ անոնց տունները այցելութիւններ կու տայ: Գրասեն-



Նորաշէնի սերտողութեան կեդրոն

եակը նաեւ կը կազմակերպէ դաստիարակչական հաւաքներ, որոնք կը միտին կենսական տեղեկութիւններ փոխանցել հայ մայրերուն՝ իրենց զաւակներուն հետ առողջ յարաբերութիւն մշակելու համար: Անոր կողքին հայ կիները կը հետեւին նաեւ համակարգիչի եւ լեզուի դասընթացներու, անոնց կը փոխանցուի ընդհանուր զարգացման փոքրիկներ՝ խոհանոցային, կանացի, առողջապահական, հոգեկան, ընկերային եւ ընտանեկան մարզերուն մէջ:

Ընկերային գրասենեակը UN International Labor Organizationի հովանաւորութեամբ նաեւ մշակած է եւ կը գործադրէ պատանիներու աշխատանքի կանխարգիլման ծրագիր մը: 6էն 12 տարեկան փոքրերուն համար յատուկ սերտողութեան դասապահներ տեղի կ'ունենան ամէն օր, ժամը 4էն 6, Նորաշէնի կեդրոնին մէջ, ուր շրջանին փոքրիկները կու գան երկու ուսուցիչներու հսկողութեան տակ եւ անոնց օժանդակութեամբ իրենց դասերը պատրաստելու: Այս ծրագիրը կը միտի փոքրիկներուն դասերուն հետեւիլ, որպէսզի անոնց մէջ ամրապնդուի ուսանելու ձգտումը եւ անհրաժեշտ ուղղութիւններու բացահայտութեան պատճառով անոնք դպրոցէ դուրս չմնան: Այդ փոքրիկներուն համար նաեւ կը կազմակերպուի ընկերային հաւաքներ եւ պտոյտներ: 12էն 17 տարեկան աշխատող պատանիներուն համար Արհեստից վարժարանին մէջ կը տրուին համակարգիչի դասընթացներ, որոնք կը նպատակադրեն հայ պատանիները, որոնք առիթ չեն ունեցած ուսում ստանալու, ոին կ'անհրաժեշտ տարրական փոքրիկներով անոնց աւելի լաւ ապագայ մը ապահովելու տեսլականով: ԼՕՆԻ կեդրոնին մէջ կայ նաեւ 5 համակարգիչով կահուցուած սենեակ մը, ուր կու գան աշխատող պատանիները յաւելեալ աշխատանքներ կատարելու համար: Ընկերային գրասենեակի պատասխանատուները նաեւ կապեր կը հաստատեն այդ պատանիներուն ծնողներուն եւ գործատէրերուն հետ, որպէսզի կանխարգիլեն անոնց շահագործումը:

Աշխուժ եւ այլազան գործունէութիւն կը տարուի նաեւ նախազգուշական բաժանմունքին մէջ: Նկատի ունենալով, որ հիւանդութիւններ կարելի է խուսափիլ նախազգուշական որոշ ցուցումներու հետեւելով ԼՕՆը այս մարզին մէջ ընդարձակ գործունէութիւն կը ծաւալէ: Բաժանմունքը կը կազմակերպէ գիշերային եւ ցերեկային դասախօսութիւններ, որոնց ընթացքին կը ներկայացուին տարբեր հիւանդութիւններ, անոնց պատճառները եւ գանոնք կանխարգիլելու ձեւերը: Այս ծրագրին ընթացքին նկատի կ'առնուին ընտանիքի բոլոր անդամները եւ անոնց առողջութիւնը: Դպրոցներուն մէջ նաեւ աշխատանք կը տարուի. ուսուցիչները կը մարզուին, որպէսզի աշակերտներուն տան

պէսզի աշակերտները խաղի միջոցով աւելի սպասուելի կերպով ստանան իրենց տրուած դիտելիքները: Բաժանմունքը նաեւ միջազգայնօրէն ճանչցուած թուականներուն յատուկ արշաւներ կը կազմակերպէ, ճրի քննութիւններ կը կատարէ եւ դասախօսութիւններ ու ձեռնարկներ կը կազմակերպէ: Բաժանմունքը ունի նաեւ շաքարախտաւորներու ծրագիր, որուն միջոցով մօտէն կը հետեւի շուրջ 384 շաքարախտաւորներու բուժման ընթացքին եւ սննդականոնին: Այս աշխատանքին համար կայ յատուկ անձնակազմ մը, որ կը հսկէ շաքարախտաւորներու առողջութեան: Հիւանդները կը ստանան բժշկական խնամք, սրտաբանի եւ ակնաբուժի խորհուրդ, տարրալուծարանի անվճար արեան քննութիւններ, դաստիարակչական ուսուցում եւ սննդականոնի մասին տարրական գիտելիքներ:

### ԲԺՇԿԱԿԱՆ ԲԱԺՄԱՍՈՒՆՔ

ԼՕՆԻ «Արաքսի Պուլղուրծեան» ընկերարժեքային կեդրոնին երկրորդ յարկը կ'այցելեն բժշկական խնամքի կարիք ունեցող անձերը: Սպասման սրահը լեցուն է տարբեր տարիքի, սեռի եւ ազգի պատկանող մարդոցով, որոնք



Բժշկական բաժանմունք

կը սպասեն իրենց կարգին: Հակառակ խճողումին, խաղաղ ու հանգիստ մթնոլորտ մը կը տրիչ սրահին մէջ. երեք պատասխանատուներ ցուցմունքներ կու տան ու կը հետեւին հիւանդներուն: Ըստ հիւանդներուն, հակառակ անոր որ ԼՕՆը չնչին գումար մը կը գանձէ իրենցմէ, իրենց կու տայ լաւագոյն սպասարկութիւնը, իսկ բժիշկները մանրամասնօրէն կը հետեւին իրենց առողջութեան: Այդ յարկին վրայ կան 28 մասնագիտացած բժիշկներ՝ մորթի, ընդհանուր մարմնի, ակնաբուժի, քիթի կոկորդի, ատամնաբուժի եւ այլն: Հոն կը գտնուի նաեւ ատամնաբուժական բաժանմունքը: Այս յարկին վրայ իւրաքանչիւր հիւանդ ունի իր թղթածրարը, որուն մէջ ամփոփուած են հիւանդին մասին տեղեկութիւններ, անոր ունեցած առողջական հարցերը, տրուած բուժումները, քննութիւններուն արդիւնքները եւ այլն: Եթէ անհատը առաջին անգամ է, որ կեդրոն կ'այցելէ, անոր համար կը պատրաստուի յատուկ թղթածրար, տոմս եւ թիւ: Հիւանդը, բաժանմունքի պատասխանատուին օժանդակութեամբ եւ նկատի ունենալով իր պարագան, կ'ընտրէ այն բժիշկը, որուն քով կ'ուզէ բուժուիլ: Կեդրոնին մէջ կան նաեւ հոգեբուժներ եւ մանկաբուժներ: Այս բաժնին մէջ կարելի է նաեւ փոքր գործողութիւններ կատարել: Օրական դրութեամբ բժշկական բաժանմունք կ'այցելեն միջին հաշուով 70 - 80 հիւանդ, երբեմն՝ մինչեւ 100 - 120 հոգի: Այս բաժնի կը նկատուի կեդրոնին հիմնական բաժնիներէն, ուր աշխատողները կը փորձեն իրենց լաւագոյնը ընել հիւանդներուն հանգստութիւնը, առողջութիւնը ապահովելու եւ անոնց գոհունակութիւն տալու համար: Յարկին վրայ, թէ՛ պատասխանատուները եւ թէ՛ բժիշկները իւրաքանչիւր պարագայի կը մօտենան հարգատի մը նման եւ կը հսկեն անոր բուժման:

### ՏԱՐՐԱԼՈՒԾԱՐԱՆ

Տարրալուծարանը կը գտնուի կեդրոնի երրորդ յարկը: Տարրալուծարանը նուիրատուներու միջոցով օժտուած է լաւագոյն որակաւոր սարքերով: Որակաւոր եւ արդիական գործիքներով օժտուած տարրալուծարանի պատասխանատուին զլիաւոր մտահոգութիւնն է ճշգրիտ արդիւնքներ ստանալ: Այդ մտահոգութեան մեկնելով՝ քննութիւններ կատարող մեքենային մէջ օրական դրութեամբ control sampleներ կը դրուին, որպէսզի ստուգէ, թէ՛ մեքենան



Շաքարախտաւորներու ծրագրում

աւելի առողջ ըլլալու, իրենք զիրենք լաւագոյն խնամելու, կենսոլորտն ու միջավայրը մաքուր պահելու ձեւերը: Այս նպատակին համար ԼՕՆԻ նախազգուշական բաժանմունքը յատուկ խաղի կը պատրաստէ (օձի խաղ), որ-

# Հիբանախոս Գեորգի

## ԵԱՇՈՒԻ ԿԸ ԽՕՄԻ ԿԱՅՈՒԹԵԱՆ ՎԱՏԹԱՐԱՅՄԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԵՏԵՒԱՆՔՆԵՐՈՒՆ ՄԱՍԻՆ

Իսրայելի կողմից պահեստի ներսին շրջաններում մեջ շարունակուող գինուորակա գործողությունները շարունակվում են այդ ոտնձգություններում ծիրին մեջ հարաւային Լիբանանի ընդգրկումով ստեղծուեցան գանազան հարցականներ շրջանին մեջ տիրող կացութեան մասնաւանդ լիբանանեան տնտեսութեան կացութեան վրայ ունենալիք ազդեցութիւններուն եւ ան դրա դարձնելուն շուրջ:

Տնտեսագէտ դոկտոր Եաշուի «Անուար» թերթին յայտնեց, որ պէտք է պատրուակել շրջանային իրադարձութիւնները՝ ըսելու համար, որ տնտեսական կացութիւնը վատ է որովհետեւ «տնտեսական կացութիւնը վատ է երկար ժամանակ է վեր Լիբանանի մէջ գործադրուած տնտեսական քաղաքականութեան ընթացքին տեղի ունեցած տնտեսական սխալներուն պատճառով: Միւս կողմէ սակայն, ան յստակացուց, թէ այս մէ-

կը չի նշանակեր, որ ինչ որ ներկայիս տեղի կ'ունենայ, իրեն հետ չի բերեր յաւելեալ ժխտական հետեւանքներ:

Ան աւելցուց. «Երկու ազդակներ կ'ազդեն Լիբանանի տնտեսական կացութեան վրայ. առաջին հերթին՝ սխալ տնտեսական քաղաքականութիւնը եւ շրջանի կացութիւնը եւ այս ծիրին մէջ կատարուած քաղաքական նախատեսութիւնները, որոնք կ'աւելցնեն տնտեսութեան վրայ ժխտական ազդեցութիւնները»:

Եաշուի նկատել տուաւ, որ շարունակուող իսրայէլեան զինուորական գործողութիւններուն նախատեսուած հետեւանքները շատ են, սակայն անոնք բոլորն ալ ժխտական են առնուազան մօտիկ ապագային համար, որովհետեւ անոնք բոլորն ալ կը մտնեն շրջանային մակարդակի վրայ տագնապի ընդլայնման ծիրին մէջ:

Եաշուի յստակացուց, որ Լիբանանեան տնտեսութիւնը պիտի ըլլայ

ամէնէն շատ ազդուողը ստեղծուած կացութեանն է՝ արարական մնացեալ պետութիւններուն բաղդատմամբ, որովհետեւ արարական բոլոր երկիրներուն մէջէն Լիբանան մինակն է, որ զինուորական ճակատումի գիծ ունի Իսրայէլի հետ, եւ «երբ մէկը հանդարտօրէն կը մտածէ տիրող կացութեան մասին, պիտի վախնայ, որովհետեւ ինչ որ տեղի կ'ունենայ, շատ մեծ հարց է. մասնաւանդ, որ 11 Սեպտեմբերի իրադարձութիւնները նպաստեցին քաղաքական վայրագութեան դէմ եղող հոսանքի հզօրացման»:

Եաշուի յայտարարեց, որ Լիբանանեան փողոցին մէջ տեղի ունեցած բողոքի ցոյցերն ու հաւաքները բարեբախտաբար հաստատութիւններու գործադուլին չառաջնորդեցին, որովհետեւ հաստատութիւններուն «չատ պիտի վնասէինք»:

ԺԻՁԷԼ ՌԱԶՁՈՒՔ»  
«Անուար»

## ԱԼԱՆ ԻՐ ԿԵՐՊՈՆԿԱԼԵ ԶԵՆՔԸ ԿԸ ՊԱՇԵ՝ ՎԱՆԱԼՈՎ, ՈՐ ԻՐՍԵ ԽԼԵՆ ԶԱՅՆ

### ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ԵՒ ԱՊԱՀՈՎՈՒԹԵԱՆ ԽՆԴՐԱՆՔ ՌԱՄԱԼԼԱՅԻ ՄԱՆՈՒԿՆԵՐԻՆ՝ ՈՂՋ ԱՇԽԱՐՀԻՆ

Այս (12 տարեկան) կ'ապրի հին Ռամալայի ժողովրդային թաղերէն մէկուն մէջ: Ան իր ընտանիքին հետ պատասպարուած է մէկ սենեակէ բաղկացած տան մը մէջ: «Հոս բաղնիք չկայ, եւ մենք կը գործածենք դրացիներուն լուսացարանը, որ կը գտնուի 30 մետր հեռավորութեան վրայ»: Անցեալ շաբթուան Ռամալայի գրաւումէն ի վեր իսրայէլացի զինուորները կայք հաստատած են տան դիմաց եւ «մեզի կ'արգիւեն մեր պէտքերը հոգալ, ինչպէս նաեւ կ'արգիւեն դուրսի խոհանոցը երթալ եւ ճաշ պատրաստել, ինծի եւ ընտանիքիս ութ անդամներուն»:



ցի զինուորները կ'արգիւեն պտուղը»: Հօրը ընկերակցութեամբ Ալիան կ'ուղղուի թաղին մէջ գտնուող խանութը՝ քաղցրաւենիներ գնելու, սակայն երբ կը տեսնէ իսրայէլեան հրասայրը, կը վախնայ եւ հօրը ձեռքէն բռնած տուն կը վազէ. «Չեմ ուզեր, որ ինծի պատահի այն, ինչ որ միւս ընկերներու պատահեցաւ, չեմ ուզեր, որ հայրս ձերբակալուեմ»: Սակայն անոր քոյրը՝ Սաւա, յոգնած է այս բոլորէն, եւ կ'ուզէ «չաքար եւ տուրմ գնել», որովհետեւ ինք յանցանք չունի պատահածին մէջ:

Այս «գէշ պայմանները» որոնց մէջ կ'ապրի Ահմէտ Աթրաշ (8 տարեկան), զգուանք կը պատճառեն իրեն, «եւ ձանձրացայ, որովհետեւ ամէն բան արգիւրուած է, արգիւրուած է թաղին մէջ խաղալ, արգիւրուած է պարտէզ երթալ, արգիւրուած է պատկերասփիւռ դիտել, որովհետեւ ծնողքս միտում ունի կը հետեւին»:

«Ես շատ կը տխրիմ մեր նահատակներուն համար, սակայն աւելի կը ցաւիմ, երբ լսեմ, թէ անոնց թիւը արագօրէն կը բազմապատկուի», կ'ըսէ Ահմէտ, որուն միակ բաղձանքն է, որ «իսրայէլացի զինուորները դուրս ելլեն մեր հողերէն, այս միակ բանն է, որ կը խնդրեմ իրենցմէ եւ այս մէկը պիտի ըլլայ պաղեստինցի ժողովուրդին լաւագոյն նուէրը»:

Ալայի եղբայրը՝ Միրզ Ժապրին (15 տարեկան), չի մոռնար նախորդ կիրակի օրուան պատահածը: «Փոքր քոյր - եղբայրներս իրենց պէտքերը կը կատարէին յատուկ ամանի մը մէջ, եւ ուզեցի ըմբոստանալ իսրայէլացի զինուորներուն արգելքին դէմ եւ բաղնիք երթալ»: Միրզ, հակառակ ծնողքին պնդումին, որ ետ կենայ որոշումէն, կը գործադրէ ծրագրածը: «Գնա՛, սակայն ուշադիր եղի», կը թելադրէ մայրը:

Բաղնիքէն դուրս ելած ատեն «ինձմէ պահանջեցին ձեռքերս վեր հանել, եւ իսրայէլացի զինուոր մը զիս բռնեց ու սկսաւ ուժգին քաշել. հարցուցին՝ ի՞նչ է անունս, քանի տարեկան եմ եւ ինչ կ'ընեմ հոն, իսկ ես պատասխանեցի»: Սակայն այդ վայրկեանին Միրզի հայրը կը դիտէր պատահածը, եւ երբ կ'ուզէ իր գաւազնը ձեռքի, ան կը պոռայ «ո՛չ, ո՛չ, մի՛ դպչիք անոր, ան մտնուկ մըն է, որ պարզապէս ուզեց բաղնիք երթալ»:

Միրզ այդ օրուան իրադարձութիւններուն պատուը շարունակելով՝ կ'ըսէ. «Ինծի ձգեցին եւ տուն մտնելով՝ մեզ դուրս հանեցին եւ սկսան խուզարկել: Մենք մնացինք պզտիկ խոհանոցին մէջ, իսկ իրենք տունը տակն ու վրայ ընելէ ետք ոչինչ գտան, բացի նահատակներու նկարներէ եւ պաղեստինեան դրօշակէ: Զինուորները հայրս եւ քանի մը այլ մարդիկ ձերբակալելով դրին իսրայէլեան զրահապատի մը մէջ, սկսան ծեծել զանոնք, անոնց գլուխները գոցեցին պարկերով եւ զանոնք տարին անծանօթ վայր մը»:

Ըստ Ալայի, զինուորները հայրը ձերբակալեցին, որովհետեւ իրենց տան մէջ գտան պաղեստինեան դրօշակ մը: «Տեսարանը ահաւոր էր, - կը պատմէ ան. - ձերբակալուածները մեր աչքերուն առջեւ անխնայ ծեծուեցան: Այս է բուն հաքթիկութիւնը... Աստուած իմ»:

Կարծես Միրզի ըսածը ճիշդ էր, այդ օրուան դէպքերը անմոռանալի պիտի ըլլան: «Իսրայէլացի զինուորները մեզ դրին աննախանձելի պայմաններու մէջ, անոնք իրենց աղբերը սկսան թափել մեր տան սեմին եւ իրենց պէտքերը կատարել հոն, մեր աչքերուն առջեւ»:

«Աստուած էլք մը կը խնդրենք եւ բոլոր խիղճ ունեցողներն կը հայցենք միջամտել եւ մեզ դուրս հանել այս ահաւոր կացութենէն, որովհետեւ մենք այսօր կ'ապրինք հոգեկոտ չափազանց գէշ պայմաններու մէջ», կ'ըսեն երկու փոքրիկները, որոնք անհամբեր կը սպասեն իրենց հօր վերադարձին:

Ռանա պատկերասփիւռին դիմաց «գամուած» մեծ ուշադրութեամբ լուրերուն կը հետեւի եւ կը դիտէ այն պաղեստինցիները, որոնք ձերբակալուած են իսրայէլացիներուն կողմէ: Պահ մը կարծեց, թէ հայրը անոնց մէջ է. «Լացիցեմ, ես մայրս եւ քոյրս»: Ռանան (9 տարեկան) չէր գիտէր թափաքութիւնը եւ հեծկըլտուքով ըսաւ. «Մեր ճակատագիրն է, որ հայրս գինուոր ըլլայ, եւ վերջաւորութեան մենք պիտի պայքարինք»: Այս էր այն պատգամը, որ Ռանա փոխանցեց ամբողջ աշխարհին, որովհետեւ ինք պիտի չչանձնրէր, այլ պիտի պայքարէր:

Իր խօսքերէն քանի մը ժամ ետք, ուժգին ռմբակոծումի մը ընթացքին Ռամալայի փոքրիկ աղջնակը սկսած քիչ մը տկար զգալ: «Աշխարհէն կը խնդրեմ, որ օգնեն մեզի, կ'ուզեմ փրկուիլ»: Այդ վայրկեանին ան այլեւս չկրցաւ դիմանալ եւ ուզեց դուրս գալ պաշարումէն: «Կ'ուզեմ երթալ Երուսաղէմ, մեծ մօրս քով»:

Ալիան (9 տարեկան) չափազանց յուզուի ձեռով եւ շուրջիններուն աչքերէն արցունք հոսեցնելով՝ ըսաւ. «Աշխարհէն կը խնդրեմ, որ մեզի պաշտպանեն եւ պահպանեն»: Ան մեծ ցաւով խօսեցաւ, որովհետեւ ինք ամէն օր ականատես կ'ըլլայ պաղեստինցի երիտասարդներու շարքարանքին եւ լրագրողներու մահուան: Այդ պատահածները մեծ վախ արթնցուցած են Ալիանի մէջ, եւ ան փոսի մը մէջ պահած էր իր խալիթները ու հողով ծածկած է զանոնք, «որպէսզի իսրայէլացի զինուորները ինձմէ չխլեն կերպրկալէ խաղալիք գէնքերս»:

Խաղալիքներու բացակայութեան Ալիան Չայէտ կարօտը ունի թաղին մէջ, ընկերներուն հետ խաղալու: «Մտնողքս կ'արգիւեն դուրս ելլել. իսկ իսրայէլացի

## ԸԱՐԱԻՒ ՄԵՋ ԲԱՆԱԿԻ ՏԱՐԱԾՈՒՄ

### ՎԻՃԱՅԱՐՈՅՑ ԽՆԴԻՐ՝ ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ԵՒ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄԱԿԱՐԴԱԿՆԵՐՈՒ ՎՐԱՅ



Դիմադրութեան գործողութիւններն մեկը

